ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/9 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
19	18մմ և 14մմ տրամագծով մետաղական հնգաթև աստղեր Գնդապետի, փոխգնդապետի և մայորի՝ 5 200 հատ Մաքսային ծառայության գնդապետի, փոխգնդապետի և մայորի լամբակների վրա տեղադրվող հնգաթև աստղերը (Նկար 82) ոսկեգույն մետաղից են, 18 մմ տրամագծով: Կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի՝ 17 800 հատ Մաքսային ծառայության կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի լամբակների վրա տեղադրվող հնգաթև աստղերը (Նկար 82) ոսկեգույն մետաղից են, 14 մմ տրամագծով: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ ** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին: *** Յուրաքանչյուր համազգեստի վրա պետք է լինի համապատասխան պիտակ, որի վրա պետք է նշված լինի կտորի կամ գործվածքի բաղադրությունը (տոկոսային հարաբերակցությամբ) և ապրանքի խնամքի առանձնահատկությունները (պատկերների կամ մակագրությունների տեսքով): ****Բոլոր չափաբաժինների համար՝ բացառությամբ 7-րդ,16-րդ և 19-րդ չափաբաժինների, Մատակարարը պետք է իր միջոցների հաշվին ներկայացնի Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված, հավաստագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված երեսացուի գործվածքի բաղադրության, ներկի կայունության, մակերեսային խտության և աստառի բաղադրության վերաբերյալ եզրակացություն: ***** Բոլոր չափաբաժիններով՝ բացառությամբ 6-րդ,7-րդ, 8-րդ և 19-րդ չափաբաժինների, նախատեսված յուրաքանչյուր ապրանք պետք է ունենա առանձին փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի անվանումը, չափը,

	արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: ****** Կոշիկների յուրաքանչյուր զույգը պետք է լինի առանձին ստվարաթղթե տուփով, որի վրա պետք է նշված լինի անվանումը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, չափսը: ******* Յուրաքանչյուր համազգեստի այն տեսակը, որի վրա առկա է կոճակ պետք է ունենա միևնույն կոճակից մեկական պահեստային օրինակ, որը պետք է ներսի կողմից պիտակով ամրացած լինի տվյալ համազգեստին: ******** Յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսված ապրանք, ըստ սեռերի, չափսերի և/կամ կոչումների, պետք է փաթեթավորված լինի առանձին՝ պոլիէթիլենային տոպրակներով: ********* Մետաղական հնգաթև աստղերը պետք է փաթեթավորված լինեն առանձին տուփերով՝ յուրաքանչյուրում 100 հատ: ********** 18-րդ չափաբաժնի համար լամբակները պետք է փաթեթավորված լինեն առանձին տուփերով՝ ըստ կոչումների, մասնավորապես գնդապետի, փոխգնդապետի, մայորի 50 զույգ, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի 60 զույգ, 17-րդ չափաբաժնի համար՝ մասնավորապես գեներալ-լեյտենանտի 2 զույգ, գեներալ-մայորի 2 զույգ, գնդապետի, փոխգնդապետի և մայորի 50 զույգ, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի 50 զույգ: ********** Մատակարարը ապրանքի մատակարարումից առաջ պետք է համաձայնեցման ներկայացնի յուրաքանչյուր ապրանքատեսակից մեկ օրինակ որպես նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու նպատակով: Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս: Նմուշի հետ համատեղ՝ մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերի նմուշները՝ ամրացված Ա4 չափի գծագրական թղթի (ստվարաթղթի) վրա: Ներկայացված նմուշները ստորագրում է Մատակարարը, որոնք հաստատվում կամ մերժվում են մասանագիտական խմբի կողմից՝ ներկայացնելուց ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում: **********Մաքսային մարմնի հանրային ծառայողների կոչումների քանակը, համազգեստի բաղկացուցիչ պարագաների չափսերը, լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, Մատակարարի էլ.փոստին ծանուցում ուղարկելու միջոցով: ********** Մանրամասների համար օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 17-ի «Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձևը սահմանելու մասին» N 1980-Ա որոշման դրույթներից, որում ներառված են յուրաքանչյուր չափաբաժնի տեխնիկական բնութագրում համապատասխան համարնով նշված նկարները, ինչպես նաև համազգեստի բաղկացուցիչ մաս կազմող մաքսային մարմնի հանրային ծառայողի տարբերանշանների տեխնիկական բնութագրերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
19	